ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀՀ Գեղարքունիքի մարզային ենթակայության առողջապահական ընկերությունների կարիքների համար բժշկական սարքավորումներ ձեռք բերելու նպատակով ՀՀ ԳՄ ՀԲՄԱՊՁԲ-02/22 ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Գավառ **22.11.2022թ.**

Մասնակցում էին՝

Հանձանժողովի նախագահ՝ Լուսինե Վարդանյան

Գնահատող անդամներ՝ Աննա Սաֆոյան, Հակոբ Ալեքսանյան

Բացող անդամներ՝ Յուրա Մուշեղյան, Արսեն Մելքոնյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Արթուր Բաղեյան

1. **Տեղեկատվություն ՀՀ ԳՄ ՀԲՄԱՊՁԲ-02/22 ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնման ընթացակարգի գների նվազեցման միաժամանկայա բանակցությունների վերաբերյալ:**

Բանակցությունները տեղի ունեցան սահմանված ժամկետում, սահմանված հասցեում՝ 2022 թվականի նոյեմբերի 22 –ին, ժամը 11:00-ին՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի վարչական շենքի 2-րդ հարկի դահլիճում:

Մասնակցում էին՝ առաջին չափաբաժնի համար «Աննարկա» ՍՊԸ-ի և «Ս.Ա.Վ. Գրուպ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչները՝ համապատասխան լիազորագրերով:

Ընդունվել է որոշում կողմ-5, դեմ-0

2. **Տեղեկատվություն մասնակիցների կողմից իջեցված գնային առաջարկների վերաբերյալ:**

ՀՀ ԳՄ ՀԲՄԱՊՁԲ-02/22 ծածկագրով մրցույթի բանակցությունների արդյունքում 1-ին չափաբաժնի համար մասնակիցները ներկայացրեցին նոր իջեցված գնային առաջարկներ, իսկ երկրորդ չափաբաժնի համար «Դիավանտ» ՍՊԸ-ն էլեկտրոնային տարբերակով ներկայացրել էր նոր գնային առաջարկ, որը ընդունվեց գնահատող հանձանժողովի կողմից:

Ընդունվել է որոշում կողմ-5, դեմ-0

3. **Տեղեկատվություն բանակցության ընթացքում մասնակիցների առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ:**

Մասնակիցները բանակցության անցկացման վերաբերյալ չներկայացրեցին դիտողություններ, իսկ բանավոր առաջարկությունները ընդունվեցին բոլորի կողմից:

Ընդունվել է որոշում կողմ-5, դեմ 0

4. **Տեղեկատվություն մասնակիցների կողմից իջեցված գնային առաջարկների վերաբերյալ:**

Մասնակիցները ներկայացրել են հետևյալ իջեցված գնային առաջարկները.

Չափաբաժին 1.

Տամոգրաֆիկ սարքեր

<<	Կազմակերպության անվանումը	Կողմնորոշիչ գին	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	«ԱՆՆԱՐԿԱ» ՍՊԸ	200 000 000	127 900 000	0	127 900 000
2	«Ս.Ա.Վ.Գրուպ» ՍՊԸ		128 000 000	0	128 000 000

Չափաբաժին 2.

Ռենտգեն աշխտորոշման համակարգ

<<	Կազմակերպության անվանումը	Կողմնորոշիչ գին	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	«Դիավանտ» ՍՊԸ	100 000 000	96 000 000	0	96 000 000

Ընդունվել է որոշում կողմ-5, դեմ-0

5. **Տեղեկատվություն շահած չափաբաժինների վերաբերյալ:**

Այսպիսով՝ ՀՀ ԳՄ ՀԲՄԱՊՁԲ-02/22 ծածկագրով մրցույթի գնահատման արդյունքում 1-ին չափաբաժնի համար հաղթող մասնակից է համարվում «Աննարկա» ՍՊԸ-ն, 2-րդ չափաբաժնի համար «Դիավանտ» ՍՊԸ-ն :

Ընդունվել է որոշում կողմ-5, դեմ-0

6. **Տեղեկատվություն անգործության ժամկետի վերաբերյալ**

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը անգործության ժամկետը սահմանվում է 10 օրացուցային օր, որի լրանալուց հետո մասնակիցներին կծանուցվի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում գնային առաջարկի չափով որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացնելու պարտավորության վերաբերյալ, ինչպես նաև կնքվելիք պայմանագրի նախագիծը և ծանուցում:

Միաժամանակ՝ մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում պետք է հրապարակի հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

7. **Ընտրված մասնակիցների հետ պայմանագիր կկնքվի, եթե վերջիններս կներկայացնեն որակավորման և պայմնագրի ապահովումները:**

Ընդունվել է որոշում կողմ-5, դեմ-0

Նախագահ՝ Վարդանյան Լուսինե

Գնահատող անդամներ՝ Սաֆոյան Աննա

Ալեքսանյան Հակոբ

Բացող անդամներ ՝ Մուշեղյան Յուրա

Մելքոնյան Արսեն

Հանձնաժողովի քարտուղար՝ Արթուր Բաղեյան